

The logo of the Football Federation of Armenia is a circular emblem. It features a blue soccer ball in the center, with a red and white zigzag pattern below it. The text "FOOTBALL FEDERATION OF ARMENIA" is written in white on a red background around the top half of the circle. At the bottom, the Armenian letters "Կ Ֆ Ֆ" are written in white on a yellow background.

ՀՖՖ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2019 թ. խմբագրություն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5

- Հոդված 1. Կիրառությունը5
- Հոդված 2. Կապը ՀՖՖ մրցումների անցկացման կանոնակարգերի հետ5
- Հոդված 3. Դերը և պարտականությունները5
- Հոդված 4. Հապավումները և հասկացությունները6

ՄԱՍ II - ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ 8

ԳԼՈՒԽ 1 - Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված տարածքների չափանիշները 8

- Հոդված 5. Խաղադաշտը8
- Հոդված 6. Նախավարժանքի տարածքը9
- Հոդված 7. Հիմնական և պահեստային դարպասները9
- Հոդված 8. Պահեստայինների նստարանները 10
- Հոդված 9. Պատգարակ կրող անձնակազմի համար նախատեսված նստատեղը 10
- Հոդված 10. Դրոշակաձողերը 10
- Հոդված 11. Փոխարինողների լուսատախտակը 10
- Հոդված 12. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները 10
- Հոդված 13. Հանդերձարանները 11
- Հոդված 14. Պատվիրակի սենյակը 11
- Հոդված 15. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը 11
- Հոդված 16. Լուսատախտակը 12
- Հոդված 17. Դոպինգ ստուգման սենյակը 12
- Հոդված 18. Ավտոկայանատեղիները 12
- Հոդված 19. Լուսավորությունը 12

ԳԼՈՒԽ 2 - Հանդիսատեսի համար նախատեսված տարածքները 14

- Հոդված 20. Մարզադաշտի տարողունակությունը 14
- Հոդված 21. Տրիբունաները 14



Հոդված 22. Մարզադաշտի մուտքերը, ելքերը և շրջանաձև ուղիները..... 15

Հոդված 23. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգը..... 15

Հոդված 24. Երկրպագուների համար նախատեսված սանիտարական պայմանները..... 16

Հոդված 25. Երկրպագուների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը 16

Հոդված 26. Հաշմանդամություն ունեցող երկրպագուների համար նախատեսված հարմարությունները..... 16

Հոդված 27. Պատվավոր հյուրերի նստատեղերը..... 17

Հոդված 28. Ավտոկայանատեղիները..... 17

ԳԼՈՒԽ 3 – Լրատվամիջոցների համար նախատեսված տարածքները..... 18

Հոդված 29. Լրատվամիջոցների համար նախատեսված նստատեղերը..... 18

Հոդված 30. Տեսախցիկների հարթակները..... 18

Հոդված 31. Հեռուստամեկնաբանների նստատեղերը 19

Հոդված 32. Արագ/ֆլեշ հարցազրույցների տարածքները..... 19

Հոդված 33. Տեսահեռարձակման շարժական հեռուստակայանների տարածքը 20

Հոդված 34. Մամուլի ասուլիսների սենյակը 20

Հոդված 35. Խառը գոտին..... 21

ՄԱՍ III - ՀՀ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... 22

Հոդված 36. Խաղադաշտը..... 22

Հոդված 37. Նախավարժանքի տարածքը..... 23

Հոդված 38. Հիմնական և պահեստային դարպասները..... 23

Հոդված 39. Պահեստայինների նստարանները 24

Հոդված 40. Դրոշակաձողերը 24

Հոդված 41. Փոխարինողների լուսատախտակը..... 24

Հոդված 42. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները..... 24

Հոդված 43. Հանդերձարանները 24

Հոդված 44. Պատվիրակի սենյակը 25

Հոդված 45. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը 25

Հոդված 46. Լուսատախտակը 25



Հոդված 47. Ավտոկայանատեղիները.....26

Հոդված 48. Լուսավորությունը.....26

Հոդված 49. Տեսախցիկների հարթակները.....27

ՄԱՍ IV - ՀՖՖ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....28

Հոդված 50. Խաղադաշտը.....28

Հոդված 51. Նախավարժանքի տարածքը.....29

Հոդված 52. Դարպասները29

Հոդված 53. Պահեստայինների նստարանները30

Հոդված 54. Փոխարինողների լուսատախտակը.....30

Հոդված 55. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները.....31

Հոդված 56. Հանդերձարանները31

Հոդված 57. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը31

Հոդված 58. Լուսատախտակը31

ՄԱՍ V - ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ.....32

Հոդված 59. Անհամապատասխանությունը32

Հոդված 60. Հավելվածները32

Հոդված 61. Կիրառությունը.....32

Հոդված 62. Ընդունումը, գործողության ժամկետը և փոխարինումը.....32


ՀԱՎԵԼՎԱԾ Ա - ԼՈՒՍԱՐՁԱԿԻՉՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ.....33

ՀԱՎԵԼՎԱԾ Բ - ԽԱՂԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ35



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն Կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Կանոնադրության Հոդված 39 /ը/ համաձայն:

 ՀՖՖ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ		
<i>Խմբագրություն 1</i>	<i>Ուժի մեջ է՝ 01.07.2019թ.- ից</i>	<i>Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 01.07.2019 թ-ին</i>



ՄԱՍ I - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կիրառությունը

- 1.01 Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հովանու ներքո անցկացվող Բարձրագույն խմբի առաջնության, Առաջին խմբի առաջնության և մանկապատանեկան ֆուտբոլի առաջնությունների անցկացման ենթակառուցվածքային չափանիշները:
- 1.02 Սույն կանոնակարգը կարգավորում է նաև մարզադաշտի համար պահանջվող կառուցվածքային չափանիշներին համապատասխանության վերահսկման պարտականությունները և սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում ՀՖՖ-ի անձնակազմը կարող է բացառություն անել կոնկրետ կառուցվածքային չափանիշի համար:
- 1.03 Սույն կանոնակարգը որևէ կերպ չի ազդում/բացառում ազգային օրենսդրությունից բխող մարզադաշտերին վերաբերող իրավական պարտավորությունները:

Հոդված 2. Կապը ՀՖՖ մրցումների անցկացման կանոնակարգերի հետ

- 2.01 ՀՖՖ-ի՝ մրցումների անցկացման համապատասխան կանոնակարգերը՝
- ա. սահմանում են մարզադաշտերի նկատմամբ այն նվազագույն պահանջները, որոնք անհրաժեշտ են համապատասխան մրցաշարի խաղերի անցկացման համար;
 - բ. Կարող են սահմանել հավելյալ և/կամ սույն կանոնակարգում արդեն նշվածներից ավելի խիստ կառուցվածքային չափանիշներ:

Հոդված 3. Դերը և պարտականությունները

- 3.01 ՀՖՖ-ն պարտավոր է ստուգել յուրաքանչյուր մարզադաշտ և լրացնել համապատասխան ձևաթուղթը, որը հաստատում է, որ յուրաքանչյուր



մարզադաշտ բավարարում է համապատասխան կառուցվածքային չափանիշներին:

- 3.02 Հիմք ընդունելով վերոնշյալ ձևաթուղթն ու հաստատումը, ինչպես նաև ցանկացած այլ ստացված տեղեկատվություն՝ ՀՖՖ-ի ղեկավարությունը որոշում է կայացնում մարզադաշտերի վերաբերյալ: Նման որոշումները վերջնական են:
- 3.03 ՀՖՖ-ի ներկայացուցիչները ՀՖՖ-ի կողմից կազմակերպված ցանկացած մրցաշարից առաջ կամ ընթացքում կարող են ստուգում անցկացնել այն մարզադաշտերում, որտեղ անցկացվելու կամ անցկացվում են մրցաշարերը՝ համոզվելու համար, որ բոլոր կառուցվածքային չափանիշները պահպանված են:
- 3.04 Առանձնահատուկ դժվարությունների առկայության և հիմնավորված խնդրանքի դեպքում ՀՖՖ-ի ղեկավարությունը կարող է բացառություն անել կոնկրետ կառուցվածքային չափանիշի համար:

Հոդված 4. Հապավումները և հասկացությունները

Տվյալ կանոնակարգում օգտագործվել են հետևյալ հապավումներն ու հասկացությունները.

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
IFAB	International Football Association Board - Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհուրդ
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈԻԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
VIP	Պատվավոր հյուրեր, ովքեր հրավիրված են կազմակերպչի կողմից խաղը դիտելու համար:
Պատվիրակ	Խաղի կազմակերպման և անցկացման հարցերով պատասխանատու



Պատգարակ կրող անձնակազմ երկու և ավել անձից բաղկացած անձնակազմ, ովքեր պատգարակի միջոցով տեղափոխում են խաղի ժամանակ բժշկական օգնության կարիք ունեցող ֆուտբոլիստներին

Wifi հեռահաղորդակցային ինտերնետ կապի միջոց

Մարզադաշտի Ռադիոհանգուցային համակարգ մարզադաշտի տարածքում ձայնային հաղորդակցությունների փոխանցման էլեկտրոնային համակարգ, որը պարունակում է բարձրախոսներ, խոսափողներ և այլ պարագաներ և որով հնարավոր է անմիջապես հստակ հաղորդակցություններ ուղղել ամբողջ հանդիսատեսին:



ՄԱՍ II - ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1 - Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված տարածքների չափանիշները

Հոդված 5. Խաղադաշտը

- 5.01 Խաղադաշտը պետք է լինի հարթ և համաչափ և համապատասխանի IFAB-I *Խաղի Կանոններին*: Մակերևույթը պետք է լինի կանաչ խոտածածկով և սպիտակ գծանշումներով: Խաղադաշտի երկարությունը 100-105 մետր է, իսկ լայնությունը՝ 64-68 մետր:
- 5.02 Խաղադաշտի վրա ոչ մի ուրիշ գիծ չպետք է երևա, բացի IFAB-I *Խաղի Կանոններով* սահմանված ֆուտբոլային գծանշումներից:
- 5.03 Խաղադաշտը պետք է ամբողջովին ծածկված լինի կա՛մ բնական խոտածածկով (100% բնական խոտ), կա՛մ պատրաստի տեղադրված խոտով (հիբրիդ), կամ արհեստական խոտածածկով (100% արհեստական մանրաթելեր):
- 5.04 Արհեստական խոտածածկը պետք է.
- ա. անցած լինի ՖԻՖԱ-ի համապատասխան սերտիֆիկացում, որը կարող է հատկացվել միայն այդ դեպքում, երբ խոտածածկը ստուգվել է ՖԻՖԱ-ի կողմից հավատարմագրված լաբորատորիայի կողմից և հաստատվել է, որ վերջինս բավարարում է ՖԻՖԱ-ի բոլոր չափանիշները:
 - բ. բավարարի ազգային գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները (եթե կան այդպիսիք):
- 5.05 Խաղադաշտի վրա 21 մետրից ցածր ոչ մի առարկա չպետք է տեղակայված լինի:
- 5.06 Խաղադաշտի հարակից տարածքը պետք է անվտանգ լինի ֆուտբոլիստների և մրցավարների համար: Խաղադաշտի հարակից գոտում գտնվող սարքավորումները և այլ կառուցվածքային դետալները պետք է տեղակայված լինեն այնպես, որպեսզի վտանգ չներկայացնեն ֆուտբոլիստների, մարզիչների կամ պաշտոնյաների համար (ինչպես նշված է Հավելված Բ-ում):



Հոդված 6. Նախավարժանքի տարածքը

Պահեստայինների նախավարժանքի տարածքը տեղակայվում է մրցավարի առաջին օգնականի հետևում՝ խաղադաշտի եզրային գծի ամբողջ երկայնքով կամ դարպասների հետևի հատվածում տեղակայված գովազդային ցուցանակների հետևում: Այն պետք է ծածկված լինի կա՛մ բնական, կա՛մ ամուր տեղադրված արհեստական խոտածածկով, և միաժամանակ նախընտրելի է, որպեսզի գտնվի խաղադաշտի հետ միևնույն հարթության վրա:

Հոդված 7. Հիմնական և պահեստային դարպասները

7.01 Դարպասաձողերը պետք է պատրաստված լինեն ալյումինից կամ նմանատիպ նյութից՝ կլոր կամ էլիպսաձև և վտանգ չներկայացնող ֆուտբոլիստների համար: Ավելին՝ վերջիններս պետք է համապատասխանեն IFAB-ի *Խաղի Կանոններին*, ինչը մասնավորապես նշանակում է, որ

ա. դարպասների ուղղահայաց դարպասաձողերի միջև ընկած հեռավորությունը պետք է լինի 7.32մ;

բ. հորիզոնական դարպասաձողի ներքևի եզրից մինչև գետինն ընկած հեռավորությունը պետք է լինի 2.44 մ;

գ. դարպասների ուղղահայաց և հորիզոնական դարպասաձողերը պետք է լինեն սպիտակ և ունենան նույն լայնությունն ու խորությունը, որը չպետք է գերազանցի 12սմ;

դ. դարպասները պետք է ամուր ֆիքսված լինեն գետնին:

7.02 Մարզադաշտում պետք է առկա լինի պահեստային դարպաս, որն անհրաժեշտության դեպքում կարող է հեշտությամբ տեղափոխվել:



Հոդված 8. Պահեստայինների նստարանները

8.01 Մարզադաշտը պետք է ունենա խաղադաշտի մակարդակի վրա տեղակայված և ծածկի տակ գտնվող երկու նստարան, որոնք նախատեսված են առնվազն 18 անձի համար և տեղակայվում են եզրային գծից առնվազն 4 մետր հեռավորության վրա:

8.02 Երկու պահեստային նստարանների միջև ընկած տարածքում տեղադրվում է 4-րդ պաշտոնյայի նստարանը (նախատեսված 2 անձի համար)՝ սեղանով և ծածկով:

Հոդված 9. Պատգարակ կրող անձնակազմի համար նախատեսված նստատեղը

Մարզադաշտը պետք է ունենա պատգարակ կրող անձնակազմի համար նախատեսված 2 նստատեղ՝ տեղակայված պահեստայինների նստարաններից որևէ մեկի հետևում:

Հոդված 10. Դրոշակաձողերը

Մարզադաշտը պետք է ունենա առնվազն 3 դրոշակաձող կամ այլ հարմար կառույց, որի վրա հնարավոր կլինի ամրացնել 3 դրոշ:

Հոդված 11. Փոխարինողների լուսատախտակը

Մարզադաշտը պետք է ունենա փոխարինողների 2 էլեկտրական լուսատախտակ:

Հոդված 12. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները

Հաջորդող հոդվածներում նշված բոլոր այն սենյակները, որոնք գտնվում են ֆուտբոլիստներին և պաշտոնյաներին վերաբերող տարածքներում, պետք է գտնվեն սանիտարահիգիենիկ գերազանց վիճակում, ապահովված լինեն լավ լուսավորությամբ, օդափոխության և/կամ ջեռուցման համակարգով և հստակ ուղեցույցերով:



Հոդված 13. Հանդերձարանները

- 13.01** Մարզադաշտերը պետք է ունենան առնվազն մեկական հանդերձարան յուրաքանչյուր թիմի համար, որն ապահովված կլինի նվազագույնը 5 ցնցուղով, 2 զուգարանակոնքով, առնվազն 25 հոգու նստատեղով, 1 մերսման սեղանով և 1 գրատախտակով, հագուստի կախիչներով կամ պահարաններով:
- 13.02** Մարզադաշտերը պետք է ունենան նաև մրցավարների հանդերձարան, որը պետք ունենա առնվազն 20մ² տարածք, համալրված լինի 1 ցնցուղով, 1 զուգարանակոնքով, 6 հոգու համար նստատեղով և 1 գրասեղանով:
- 13.03** Մրցավարական սենյակը և ամբողջ հանդերձարանային գոտին պետք է ապահովված լինի Wifi կապով:
- 13.04** Մարզադաշտում յուրաքանչյուր թիմի և մրցավարական անձնակազմի համար երաշխավորվում է ուղիղ, մեկուսի և ապահով ճանապարհ՝ իրենց հանդերձարաններից դեպի խաղադաշտ և հակառակ ուղղությամբ:

Հոդված 14. Պատվիրակի սենյակը

- 14.01** Մարզադաշտը պետք է ունենա սենյակ, որը նախատեսված է բացառապես ՀՖՖ-ի պատվիրակի և մրցավարական տեսուչի համար, որտեղից հնարավոր կլինի հեշտությամբ մուտք գործել թիմերի և մրցավարների հանդերձարաններ:
- 14.02** Պատվիրակի սենյակը պետք է ապահովված լինի Wifi կապով:

Հոդված 15. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը

Մարզադաշտը պետք է ունենա ֆուտբոլիստների և պաշտոնյաների առաջին բուժօգնության համար նախատեսված հատուկ սենյակ՝ կահավորված առաջին բուժօգնության համար նախատեսված նվազագույն պարագաներով՝ ներառյալ դիֆեբրիլիատոր և թթվածնային բալոն:



Հոդված 16. Լուսատախտակը

Մարզադաշտում պետք է առկա լինի էլեկտրական լուսատախտակ, որը հնարավորություն կընձեռի ցուցադրել խաղի մասնակից թիմերի ամբողջական անվանումները, խաղի հաշիվը և ժամանակը՝ բոպեներով և վայրկյաններով: Լուսատախտակը պետք է տեղակայված լինի հնարավորինս կենտրոնական և երկրպագուների համար տեսանելի վայրում:

Հոդված 17. Դոպինգ ստուգման սենյակը

Մարզադաշտը պետք է ունենա դոպինգ ստուգման համար նախատեսված հատուկ սենյակ, ինչպես սահմանված է *ՈԻԵՖԱ-ի Հակադոպինգային Կանոնակարգում*:

Հոդված 18. Ավտոկայանատեղիները

Մարզադաշտի տարածքում պետք է լինի թիմերին և պաշտոնյաներին սպասարկող առնվազն 2 (երկու) ավտոբուսի և 10 (տասը) մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի: Այն պետք է լինի անվտանգ, ապահով տարածքում, թիմերի ու պաշտոնյաների համար նախատեսված մարզադաշտի մուտքի անմիջապես հարևանությամբ: Եթե ավտոկայանատեղին չի գտնվում թիմերի ու պաշտոնյաների համար նախատեսված մարզադաշտի մուտքի անմիջապես հարևանությամբ, ապա պետք է կազմակերպվի վերջիններիս անվտանգ և ապահով իջեցումը և մուտքը մարզադաշտ:

Հոդված 19. Լուսավորությունը

19.01 ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հանդիպումները սպասարկող մարզադաշտերի համար լուսավորության առկայությունը պարտադիր պայման չէ: Սակայն այն մարզադաշտերը, որոնք ապահովված են լուսային համակարգով, պետք է համապատասխանեն Աղյուսակ 1-ում ներկայացված նվազագույն պայմաններին.



Աղյուսակ 1.

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Բավականաչափ լուսավորություն խաղի պատշաճ հեռարձակումն ապահովելու համար:	
800 Eh (լյուքս)* միատեսակության հետևյալ հարաբերակցությամբ U1h >0.4 և U2h >0.5	350 Ev (լյուքս)* յուրաքանչյուր հարթության վրա միատեսակության հետևյալ հարաբերակցությամբ U1>0.35 և U2 >0.45

19.02 Մարզադաշտը պետք է ունենա նաև առանձին հոսանքի պահուստային աղբյուր, որը խաղի ժամանակ էլեկտրաէներգիայի խափանման դեպքում կապահովի առնվազն 350 Eh (լյուքս) միջին հորիզոնական լուսավորություն:

* Լուսավորությունը չափվում է ըստ Հավելված Ա-ի:



ԳԼՈՒԽ 2 - Հանդիսատեսի համար նախատեսված տարածքները

Հոդված 20. Մարզադաշտի տարողունակությունը

- 20.01 Մարզադաշտը պետք է համալրված լինի առնվազն 800 հոգու համար նախատեսված անհատական և համարակալված նստատեղերով (ներառյալ՝ բոլոր ստանդարտ և VIP նստատեղերը):
- 20.02 Մարզադաշտի ընդհանուր նստատեղերի առնվազն 5 տոկոսը պետք է լինի որևէ կերպ սահմանազատված և առանձնացված տարածքում (հյուր թիմի երկրպագուների համար): Սահմանազատումը հնարավոր է իրականացնել նաև խաղի մեկնարկից առաջ հրահանգիչների միջոցով:

Հոդված 21. Տրիբունաները

- 21.01 Հանդիսատեսի նստատեղերը պետք է լինեն անհատական, համարակալված, ամուր ֆիքսված, պատրաստված չկոտրվող և չհրկիզվող ամուր նյութից և ունենան առնվազն 30 սմ բարձրությամբ թիկնակ՝ չափած նստատեղից:
- 21.02 Տրիբունաները պետք է ամրացված լինեն ամբողջությամբ լցված հիմքերի վրա և չպետք է հիմնված լինեն կամ պարունակեն որևէ խողովակաձև/փայտամած կառույց: Տրիբունաների նյութը, ձևը և կառուցվածքը պետք է հստակ նախատեսված լինի մշտական օգտագործման համար:
- 21.03 Կանգնելու հարմարություններով տարածքները, հարթակները և առանց թիկնակի նստարանները արգելվում են:
- 21.04 Ժամանակավոր տրիբունաների օգտագործումն արգելվում է:
- 21.05 Մարզադաշտերը պետք է լինեն լավ վիճակում և բոլոր հանրային տարածքները պետք է լինեն լավ լուսավորված: Չպետք է լինեն չամրացված դետալներ (օրինակ՝ քար, բետոնե դետալ), որոնք հնարավոր կլինի այրել, նետել կամ օգտագործել այլ նշանակությամբ:



Հոդված 22. Մարզադաշտի մուտքերը, ելքերը և շրջանաձև ուղիները

- 22.01** Մարզադաշտին մոտեցման ուղիները, մուտքերը, ելքերը և մարզադաշտի ներսում գտնվող բոլոր հանրային տարածքները պետք է ապահովված լինեն հստակ ուղեցույցերով և նշաններով (օրինակ՝ տառերով կամ թվերով) մարզադաշտում հանդիսատեսի հեշտ կողմնորոշվելու համար:
- 22.02** Մուտքի դարպասները և/կամ պտուտակադռները (տուրնիկետները) պետք է նախագծված լինեն այնպես, որպեսզի վերջիններիս մոտ չառաջանան խցանումներ, և ապահովվի երկրպագուների սահուն ներհոսքը:
- 22.03** Յուրաքանչյուր մուտքի մոտ պետք է փակցված լինեն արգելված իրերը նշող հիմնական կանոնները: Ցանկալի է, որպեսզի վերջիններս լինեն միջազգայնորեն ճանաչում ունեցող պատկերագրերի (պիկտոգրամների) տեսքով:
- 22.04** Բոլոր հանրային մուտքերը, ելքերը և շրջանաձև ուղիները պետք է հստակ տարբերվեն նստատեղերի տարածքներից: Մուտքի, ելքի դարպասները և բոլոր դռները պետք է լինեն գործող և հստակ ուղենշված համաշխարհային ճանաչում ունեցող նշաններով:
- 22.05** Բոլոր տարհանման ուղիների մաս կազմող դարպասներն ու դռները, ինչպես նաև հանրային տարածքների ու խաղադաշտի միջև ընկած բոլոր դարպասները (եթե կան այդպիսիք) պետք է.
- ա. լինեն գործող և նախագծված այնպես, որպեսզի վերջիններս մնան չկողպված (սակայն փակված), քանի դեռ հանդիսատեսը մարզադաշտում է;
 - բ. բացվեն դուրս՝ դեպի ելքը և տարհանման ուղիները:

Հոդված 23. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգը

- 23.01** Մարզադաշտը պետք է ունենա ռադիոհանգուցային համակարգ՝ կահավորված բարձրախոսներով, որն ապահովում է ձայնային հաղորդագրությունների տարածումը մարզադաշտի ամբողջ տարածքում:
- 23.02** Ռադիոհանգուցը պետք է ներառի մարզադաշտի թե՛ ներսի, թե՛ դրսի հատվածները:



Հոդված 24. Երկրպագուների համար նախատեսված սանիտարական պայմանները

24.01 Բավարար քանակությամբ մաքուր և հիգիենայի պահանջներին համապատասխանող սանիտարական հարմարությունները (հասարակական զուգարաններ) հավասարապես տեղաբաշխվում են մարզադաշտերի բոլոր սեկտորներում՝ ըստ տղամարդկանց և կանանց 80:20 հարաբերակցության: Զուգարանակոնքերը և միզարանները պետք է ապահովված լինեն ջրամաքրման համակարգով: Զուգարանները պետք է ապահովված լինեն լվացարաններով, զուգարանի թղթով և օձառով, որոնք պետք է ամուր ֆիքսված լինեն իրենց տեղում:

24.02 Սանիտարական նվազագույն պահանջները ներառում են հետևյալը.

ա. 1 զուգարանակոնք 250 տղամարդու համար;

բ. 1 միզարան 125 տղամարդու համար;

գ. 1 զուգարանակոնք 125 կնոջ համար:

Հոդված 25. Երկրպագուների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը

25.01 Մարզադաշտը պետք է ունենա ամբողջովին կահավորված և պետական համապատասխան մարմինների կողմից հաստատված առաջին բուժօգնության առնվազն մեկ սենյակ՝ նախատեսված հանդիսատեսի համար: Որպես այլընտրանք՝ հանդիսատեսի համար առաջին բուժօգնությունը կարող է կազմակերպվել շտապ օգնության մեքենայի միջոցով, որը սակայն չի կարող լինել թիմերի և պաշտոնյաների համար նախատեսված շտապ օգնության մեքենան:

25.02 Բոլոր առաջին բուժօգնության սենյակները պետք է հստակ տարբերակվեն և լինեն պատշաճ կերպով հստակ ուղենշված:

Հոդված 26. Հաշմանդամություն ունեցող երկրպագուների համար նախատեսված հարմարությունները

26.01 Մարզադաշտերը պետք է ունենան հատուկ առանձնացված մուտքեր, ելքեր, նստատեղեր հաշմանդամություն ունեցող երկրպագուների և նրանց



օգնականների համար: Բոլոր նման նստատեղերը պետք է ապահովեն բաց տեսանելիություն դեպի խաղադաշտ:

26.02 Բոլոր այն սեկտորները, որտեղ կան հաշմանդամություն ունեցող երկրպագուների համար նախատեսված նստատեղեր, պետք է ունենան առանձին սանիտարական հարմարություններ, որոնք նախատեսված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

26.03 Յուրաքանչյուր 15 հաշմանդամ երկրպագուի համար պետք է հասանելի լինի մեկ առանձին գուգարան:

Հոդված 27. Պատվավոր հյուրերի նստատեղերը

27.01 Մարզադաշտերը պետք է ունենան նվազագույնը 30 VIP նստատեղ՝ նախատեսված պատվավոր հյուրերի համար:

27.02 VIP նստատեղերը պետք է լինեն ծածկի տակ, գլխավոր տրիբունայում՝ երկու 16մ գծերի մեջտեղում, որպեսզի հնարավորինս մոտ լինեն կիսադաշտերի բաժանարար գծին:

Հոդված 28. Ավտոկայանատեղիները

Մարզադաշտերը պետք է ունենան ապահով և անվտանգ վայրում տեղակայված նվազագույնը 20 մեքենա տեղավորող ավտոկայանատեղի՝ նախատեսված պատվավոր հյուրերի, անձնակազմի և այլ հյուրերի համար:



ԳԼՈՒԽ 3 – Լրատվամիջոցների համար նախատեսված տարածքները

Հոդված 29. Լրատվամիջոցների համար նախատեսված նստատեղերը

- 29.01** Մարզադաշտերը պետք է ունենան հատուկ պահված նստատեղեր մամուլի ներկայացուցիչների և ռադիո մեկնաբանների համար: Այն պետք է լինի ծածկի տակ և գտնվի գլխավոր տրիբունայի կենտրոնական հատվածում, որտեղից կլինի բաց տեսարան դեպի ամբողջ խաղադաշտը և շրջակա տարածքը:
- 29.02** Նստատեղերի տեսանկյունից մարզադաշտերը պետք է ունենան լրատվամիջոցների համար նախատեսված ծածկով առնվազն 20 նստատեղ, որոնցից 10-ը ապահովված լինեն սեղաններով:
- 29.03** Յուրաքանչյուր գրասեղան պետք է բավականաչափ մեծ լինի, որպեսզի վրան տեղավորվի շարժական համակարգիչ և պետք է ապահովված լինի հոսանքի և ինտերնետի աղբյուրով:

Հոդված 30. Տեսախցիկների հարթակները

- 30.01** Մեկ հիմնական տեսախցիկի և երկու 16 մ գծի տեսախցիկների հարթակներ պետք է տեղադրվեն գլխավոր կամ հակառակ տրիբունայում: Մարզադաշտում պետք է հնարավորություն լինի նաև տեղադրելու մեկական տեսախցիկ յուրաքանչյուր դարպասի հետևում, ինչպես նաև մեկ տեսախցիկ եզրային մրցավարներից որևէ մեկի հետևում:
- 30.02** Հիմնական տեսախցիկի հարթակը պետք է լինի ծածկի տակ՝ տեղադրված ճիշտ նույն գծի վրա, ինչ կիսադաշտերի բաժանարար գիծը և լինի այնպիսի բարձրության վրա, որը կերաշխավորի բաց և օպտիմալ տեսարան դեպի ամբողջ խաղադաշտը և շրջակա տարածքը: Հարթակի հիմքը պետք է լինի հարթ, ամուր և չշարժվող: Հարթակը պետք է ունենա նվազագույնը 2մ լայնություն և 2մ խորություն մեկ տեսախցիկ տեղադրելու համար:



30.03 16մ գծի տեսախցիկների համար երկու հարթակները՝ յուրաքանչյուրը 2մ լայնությամբ և 2մ խորությամբ, որը նախատեսված է մեկ տեսախցիկ տեղադրելու համար, պետք է տեղակայված լինեն գլխավոր տրիբունայում՝ ճիշտ տուգանային հրապարակների 16մ գծի ուղղությամբ՝ հիմնական տեսախցիկի բարձրությանը հավասար կամ վերջինից ավելի բարձր:

Հոդված 31. Հեռուստամեկնաբանների նստատեղերը

31.01 Մարզադաշտերը պետք է ապահովված լինեն հեռուստամեկնաբանների համար նախատեսված նվազագույնը 180 սմ երկարությամբ 1 գրասեղանով, 3 նստատեղով, հոսանքի ու ինտերնետի աղբյուրով և լուսավորությամբ:

31.02 Հեռուստամեկնաբանների նստատեղերը պետք է գտնվեն ծածկի տակ, գլխավոր տրիբունայում գրավեն կենտրոնական դիրք (16մ երկու գծերի մեջտեղում) և լինեն հիմնական տեսախցիկի հարթակի հետ նույն գծի վրա: Նստատեղերը նաև պետք է ունենան բաց տեսարան դեպի ամբողջ խաղադաշտը և շրջակա տարածքը, որտեղից հնարավոր կլինի հեշտ մուտք գործել լրատվամիջոցների համար նախատեսված այլ տարածքներ: Նստատեղերը պետք է լինեն ապահով և հասանելի լինեն միայն լիազորված անձանց համար: Նստատեղերի ետնամասում պետք է լինի բավականաչափ տարածություն այլ մեկնաբանների տեղաշարժվելու համար:

Հոդված 32. Արագ/ֆլեշ հարցազրույցների տարածքները

Մարզադաշտերը խաղադաշտի և հանդերձարանների միջև պետք է ունենան տարածքներ, որոնք կարելի է օգտագործել որպես արագ հարցազրույցների տարածքներ, և որտեղ կարելի է իրականացնել հեռուստատեսային ուղիղ հեռարձակում և անցկացնել ռադիո հարցազրույցներ:



Հոդված 33. Տեսահեռարձակման շարժական հեռուստակայանների տարածքը

33.01 Մարզադաշտերը պետք է ունենան ապահով տարածք, որը կարող է օգտագործվել հեռուստաընկերությունների տեսահեռարձակման շարժական հեռուստակայանների կայանման համար: Տարածքը պետք է ունենա առնվազն 100 մ² տարածք:

33.02 Տեսահեռարձակման շարժական հեռուստակայանների տարածքը պետք է.

ա. գտնվի մարզադաշտի հարևանությամբ՝ նախընտրելի է նույն կողմում, ինչ հիմնական տեսախցիկի հարթակը և ապահովված լինի հոսանքի աղբյուրով;

բ. ապահովի մաքուր, ամուր և հարթ ավտոկայանատեղի մեծ և ծանր մեքենաների համար (43 տոննա քաշով փոխադրամիջոց);

գ. ունենա պատշաճ ջրահեռացման համակարգ, որպեսզի ոչ մի հաղորդալար, սարքավորում կամ մեքենա վտանգի չենթարկվի ջրային կուտակումների առկայության պատճառով;

դ. հեռու լինի բոլոր խոչընդոտներից, ինչպես օրինակ ծառերից, շենքերից և պատնեշներից և պետք է անհապաղ մուտք ապահովի արտակարգ իրավիճակների մեքենաների համար;

ե. կա՛մ պետք է ապահովի պարզ, բաց տեսարան մարզադաշտի հարավարևմտյան հորիզոնից դեպի հարավարևելյան հորիզոն, կա՛մ լինի առանձին արբանյակային հեռահաղորդկցության տարածքից 50 մ հեռավորության սահմաններում (սկսած շարժական հեռուստակայանների տարածքի սահմանից):

Հոդված 34. Մամուլի ասուլիսների սենյակը

34.01 Մարզադաշտերը պետք է ունենան մամուլի ասուլիսների սենյակ, որը պետք է գտնվի մարզադաշտի ներսում: Այն պետք է ապահովված լինի բարձրադիր սեղանով, ամբիոն-հարթակով, տեսախցիկի հարթակով, Wifi կապով, ինչպես նաև պետք է ունենա պատշաճ լուսավորություն տեսահեռարձակման համար:

34.02 Մամուլի ասուլիսների սենյակը պետք է ունենա նվազագույնը 20 նստատեղ:



Հոդված 35. Խառը գոտին

Մարզադաշտերը հանդերձարանների և թիմերի ավտոբուսների համար նախատեսված կայանտեղիի միջև պետք է ունենան հատուկ տարածք, որը կարող է օգտագործվել որպես խառը գոտի, որտեղ լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչները խաղից հետո կարող են հարցազրույց անցկացնել ֆուտբոլիստների հետ:



ՄԱՍ III - ՀՀ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հոդված 36. Խաղադաշտը

- 36.01** Խաղադաշտը պետք է լինի հարթ և համաչափ և համապատասխանի IFAB-I *Խաղի Կանոններին*: Մակերևույթը պետք է լինի կանաչ խոտածածկով և սպիտակ գծանշումներով: Խաղադաշտի երկարությունը 100-105 մետր է, իսկ լայնությունը՝ 64-68 մետր:
- 36.02** Խաղադաշտի վրա ոչ մի ուրիշ գիծ չպետք է երևա, բացի IFAB-I *Խաղի Կանոններով* սահմանված ֆուտբոլային գծանշումներից:
- 36.03** Խաղադաշտը պետք է ամբողջովին ծածկված լինի կա՛մ բնական խոտածածկով (100% բնական խոտ), կա՛մ պատրաստի տեղադրված խոտով (հիբրիդ), կամ արհեստական խոտածածկով (100% արհեստական մանրաթելեր):
- 36.04** Արհեստական խոտածածկը պետք է.
- ա. անցած լինի ՖԻՖԱ-ի համապատասխան սերտիֆիկացում, որը կարող է հատկացվել միայն այդ դեպքում, երբ խոտածածկը ստուգվել է ՖԻՖԱ-ի կողմից հավատարմագրված լաբորատորիայի կողմից և հաստատվել է, որ վերջինս բավարարում է ՖԻՖԱ-ի բոլոր չափանիշները:
 - բ. բավարարի ազգային գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները (եթե կան այդպիսիք):
- 36.05** Խաղադաշտի վրա 21 մետրից ցածր ոչ մի առարկա չպետք է տեղակայված լինի:
- 36.06** Խաղադաշտի հարակից տարածքը պետք է անվտանգ լինի ֆուտբոլիստների և մրցավարների համար: Խաղադաշտի հարակից գոտում գտնվող սարքավորումները և այլ կառուցվածքային դետալները պետք է տեղակայված լինեն այնպես, որպեսզի վտանգ չներկայացնեն ֆուտբոլիստների, մարզիչների կամ պաշտոնյաների համար (ինչպես նշված է Հավելված Բ-ում):



Հոդված 37. Նախավարժանքի տարածքը

Պահեստայինների նախավարժանքի տարածքը տեղակայվում է մրցավարի առաջին օգնականի հետևում՝ խաղադաշտի եզրային գծի ամբողջ երկայնքով կամ դարպասների հետնային հատվածում տեղակայված գովազդային ցուցանակների հետևում: Այն պետք է ծածկված լինի կա՛մ բնական, կա՛մ ամուր տեղադրված արհեստական խոտածածկով, և միաժամանակ նախընտրելի է, որպեսզի գտնվի խաղադաշտի հետ միևնույն հարթության վրա:

Հոդված 38. Հիմնական և պահեստային դարպասները

38.01 Դարպասաձողերը պետք է պատրաստված լինեն ալյումինից կամ նմանատիպ նյութից՝ կլոր կամ էլիպսաձև և վտանգ չներկայացնող ֆուտբոլիստների համար: Ավելին՝ վերջիններս պետք է համապատասխանեն IFAB-ի *Խաղի Կանոններին*, ինչը մասնավորապես նշանակում է, որ

ա. դարպասների ուղղահայաց դարպասաձողերի միջև ընկած հեռավորությունը պետք է լինի 7.32մ;

բ. հորիզոնական դարպասաձողի ներքևի եզրից մինչև գետինն ընկած հեռավորությունը պետք է լինի 2.44 մ;

գ. դարպասների ուղղահայաց և հորիզոնական դարպասաձողերը պետք է լինեն սպիտակ և ունենան նույն լայնությունն ու խորությունը, որը չպետք է գերազանցի 12սմ;

դ. դարպասները պետք է ամուր ֆիքսված լինեն գետնին:

38.02 Մարզադաշտում պետք է առկա լինի պահեստային դարպաս, որն անհրաժեշտության դեպքում կարող է հեշտությամբ տեղափոխվել:



Հոդված 39. Պահեստայինների նստարանները

- 39.01** Մարզադաշտը պետք է ունենա խաղադաշտի մակարդակի վրա տեղակայված և ծածկի տակ գտնվող երկու նստարան, որոնք նախատեսված են առնվազն 18 անձի համար և տեղակայվում են եզրային գծից առնվազն 4 մետր հեռավորության վրա:
- 39.02** Երկու պահեստային նստարանների միջև ընկած տարածքում տեղադրվում է 4-րդ պաշտոնյայի նստարանը (նախատեսված 2 անձի համար)՝ սեղանով և ծածկով:

Հոդված 40. Դրոշակաձողերը

Մարզադաշտը պետք է ունենա առնվազն 3 դրոշակաձող կամ այլ հարմար կառույց, որի վրա հնարավոր կլինի ամրացնել 3 դրոշ:

Հոդված 41. Փոխարինողների լուսատախտակը

Մարզադաշտը պետք է ունենա փոխարինողների 2 էլեկտրական լուսատախտակ:

Հոդված 42. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները

Հաջորդող հոդվածներում նշված բոլոր այն սենյակները, որոնք գտնվում են ֆուտբոլիստներին և պաշտոնյաներին վերաբերող տարածքներում, պետք է գտնվեն սանիտարահիգիենիկ բարվոք վիճակում, պետք է ապահովված լինեն լավ լուսավորությամբ, օդափոխության և/կամ ջեռուցման համակարգով և հստակ ուղեցույցերով:

Հոդված 43. Հանդերձարանները

- 43.01** Մարզադաշտերը պետք է ունենան առնվազն մեկական հանդերձարան յուրաքանչյուր թիմի համար, որն ապահովված կլինի նվազագույնը 5 ցնցուղով, 2



գուգարանակոնքով, առնվազն 25 հոգու նստատեղով, 1 մերսման սեղանով և 1 գրատախտակով, հագուստի կախիչներով կամ պահարաններով:

43.02 Մարզադաշտերը պետք է ունենան նաև մրցավարների հանդերձարան, որը պետք ունենա առնվազն 20մ² տարածք, համալրված լինի 1 ցնցուղով, 1 գուգարանակոնքով, 4 հոգու համար նստատեղով և 1 գրասեղանով:

43.03 Մարզադաշտում յուրաքանչյուր թիմի և մրցավարական անձնակազմի համար երաշխավորվում է ուղիղ, մեկուսի և ապահով ճանապարհ՝ իրենց հանդերձարաններից դեպի խաղադաշտ և հակառակ ուղղությամբ:

Հոդված 44. Պատվիրակի սենյակը

44.01 Մարզադաշտը պետք է ունենա սենյակ, որը նախատեսված է բացառապես ՀՖՖ-ի պատվիրակի և մրցավարական տեսուչի համար, որտեղից հնարավոր կլինի հեշտությամբ մուտք գործել թիմերի և մրցավարների հանդերձարաններ:

44.02 Պատվիրակի սենյակը, ինչպես նաև ամբողջ հանդերձարանային գոտին պետք է ապահովված լինի Wifi կապով:

Հոդված 45. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը

Մարզադաշտը պետք է ունենա ֆուտբոլիստների և պաշտոնյաների առաջին բուժօգնության համար նախատեսված հատուկ սենյակ՝ կահավորված առաջին բուժօգնության համար նախատեսված նվազագույն պարագաներով:

Հոդված 46. Լուսատախտակը

Մարզադաշտում պետք է առկա լինի լուսատախտակ, որը հնարավորություն կընձեռի ցուցադրել խաղի մասնակից թիմերի ամբողջական անվանումները և խաղի հաշիվը: Լուսատախտակը պետք է տեղակայված լինի հնարավորինս կենտրոնական և երկրպագուների համար տեսանելի վայրում:



Հոդված 47. Ավտոկայանատեղիները

Մարզադաշտի տարածքում պետք է լինի թիմերին և պաշտոնյաներին սպասարկող առնվազն երկու ավտոբուսի և տասը մեքենաների համար նախատեսված ավտոկայանատեղի: Այն պետք է լինի անվտանգ, ապահով տարածքում, թիմերի ու պաշտոնյաների համար նախատեսված մարզադաշտի մուտքի անմիջապես հարևանությամբ: Եթե ավտոկայանատեղին չի գտնվում թիմերի ու պաշտոնյաների համար նախատեսված մարզադաշտի մուտքի անմիջապես հարևանությամբ, ապա պետք է կազմակերպվի վերջիններիս անվտանգ և ապահով իջեցումը և մուտքը մարզադաշտ:

Հոդված 48. Լուսավորությունը

48.01 ՀՀ Առաջին խմբի առաջնության հանդիպումները սպասարկող մարզադաշտերի համար լուսավորության առկայությունը պարտադիր պայման չէ: Սակայն այն մարզադաշտերը, որոնք ապահովված են լուսային համակարգով, պետք է համապատասխանեն Աղյուսակ 2-ում ներկայացված ներկայացված նվազագույն պայմաններին.

Աղյուսակ 2.

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Բավականաչափ լուսավորություն խաղի պատշաճ հեռարձակումն ապահովելու համար:	
800 Eh (լյուքս)* միատեսակության հետևյալ հարաբերակցությամբ U1h >0.4 և U2h >0.5	350 Ev (լյուքս)* յուրաքանչյուր հարթության վրա միատեսակության հետևյալ հարաբերակցությամբ U1>0.35 և U2 >0.45

* Լուսավորությունը չափվում է ըստ Հավելված Ա-ի



48.02 Մարզադաշտը պետք է ունենա նաև առանձին պահուստային էներգիայի աղբյուր, որը խաղի ժամանակ էլեկտրաէներգիայի խափանման դեպքում կապահովի առնվազն 350 Eh (լուքս) միջին հորիզոնական լուսավորություն:

Հոդված 49. Տեսախցիկների հարթակները

49.01 Մեկ հիմնական տեսախցիկի և երկու 16 մ գծի տեսախցիկների հարթակներ պետք է տեղադրվեն գլխավոր կամ հակառակ տրիբունայում:

49.02 Հիմնական տեսախցիկի հարթակը պետք է լինի ծածկի տակ՝ տեղադրված ճիշտ նույն գծի վրա, ինչ կիսադաշտերի բաժանարար գիծը և լինի այնպիսի բարձրության վրա, որը կերաշխավորի բաց և օպտիմալ տեսարան դեպի ամբողջ խաղադաշտը և շրջակա տարածքը: Հարթակի հիմքը պետք է լինի հարթ, ամուր և չշարժվող: Հարթակը պետք է ունենա նվազագույնը 2մ լայնություն և 2մ խորություն մեկ տեսախցիկ տեղադրելու համար:

49.03 16մ գծի տեսախցիկների համար երկու հարթակները՝ յուրաքանչյուրը 2մ լայնությամբ և 2մ խորությամբ, որը նախատեսված է մեկ տեսախցիկ տեղադրելու համար, պետք է տեղակայված լինեն գլխավոր տրիբունայում՝ ճիշտ տուգանային հրապարակների 16մ գծի ուղղությամբ՝ հիմնական տեսախցիկի բարձրությանը հավասար կամ վերջինից ավելի բարձր:



ՄԱՍ IV - ՀՖՖ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հոդված 50. Խաղադաշտը

50.01 Խաղադաշտը պետք է լինի հարթ, համաչափ և համապատասխանի ՀՖՖ ֆուտբոլի մանկապատանեկան մրցումների անցկացման և ՀՖՖ ֆուտբոլի մանկական մրցումների անցկացման Կանոնակարգերին: Մակերևույթը պետք է լինի կանաչ խոտածածկով և սպիտակ գծանշումներով:

50.02 Խաղադաշտի երկարությունն ու լայնությունը սահմանվում են ըստ Աղյուսակ 3-ի:

Աղյուսակ 3

Տարիքային խումբ	Խաղադաշտի երկարություն	Խաղադաշտի լայնություն
Մ18	100-105 մետր	64-68 մետր
Մ17	100-105 մետր	64-68 մետր
Մ16	100-105 մետր	64-68 մետր
Մ15	100-105 մետր	64-68 մետր
Մ14	100-105 մետր	64-68 մետր
Մ13	75-85 մետր	55-65 մետր
Մ12	45-60 մետր	30-40 մետր
Մ11	45-60 մետր	30-40 մետր
Մ10	35-40 մետր	27-30 մետր

50.03 Խաղադաշտը պետք է ամբողջովին ծածկված լինի կա՛մ բնական խոտածածկով (100% բնական խոտ), կա՛մ պատրաստի տեղադրված խոտով (հիբրիդ), կամ արհեստական խոտածածկով (100% արհեստական մանրաթելեր):

50.04 Արհեստական խոտածածկը պետք է.

- ա. անցած լինի ՖԻՖԱ-ի համապատասխան սերտիֆիկացում, որը կարող է հատկացվել միայն այդ դեպքում, երբ խոտածածկը ստուգվել է ՖԻՖԱ-ի կողմից

* Համաձայն ՀՖՖ մանկապատանեկան մրցումների անցկացման և ՀՖՖ մանկական մրցումների անցկացման Կանոնակարգերի



հավատարմագրված լաբորատորիայի կողմից և հաստատվել է, որ վերջինս բավարարում է ՖԻՖԱ-ի բոլոր չափանիշները:

բ. բավարարի ազգային գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները (եթե կան այդպիսիք):

50.05 Խաղաղաշտի հարակից տարածքը պետք է անվտանգ լինի ֆուտբոլիստների և մրցավարների համար: Խաղաղաշտի հարակից տարածքում քարերի, մետաղյա կոնստրուկցիաների, շինարարական աղբի կամ նման առարկաների առկայությունը խստիվ արգելվում է: Խաղաղաշտը պետք է սահմանազատված լինի եզրային գծից 4մ հեռավորության վրա և խաղաղաշտի ամբողջ պարագծով:

Հոդված 51. Նախավարժանքի տարածքը

Պահեստայինների նախավարժանքի տարածքը տեղակայվում է մրցավարի առաջին օգնականի հետևում՝ խաղաղաշտի եզրային գծի ամբողջ երկայնքով կամ դարպասների հետևում: Այն պետք է ծածկված լինի կա՛մ բնական, կա՛մ ամուր տեղադրված արհեստական խոտածածկով, և միաժամանակ նախընտրելի է, որպեսզի գտնվի խաղաղաշտի հետ միննույն հարթության վրա:

Հոդված 52. Դարպասները

52.01 Դարպասաձողերը պետք է պատրաստված լինեն այլումինից կամ նմանատիպ նյութից՝ կլոր կամ էլիպսաձև, վտանգ չներկայացնող ֆուտբոլիստների համար, ամուր ֆիքսված լինեն գետնին:

52.02 Դարպասաձողերը պետք է համապատասխանեն ՀՖՖ ֆուտբոլի մանկապատանեկան մրցումների անցկացման և ՀՖՖ ֆուտբոլի մանկական մրցումների անցկացման Կանոնակարգերին, որտեղ մասնավորապես սահմանվում է (տես Աղյուսակ 4).



Աղյուսակ 4*

Տարիքային խումբ	Դարպասի չափերը
Մ18	7.32 մ x 2.44 մ
Մ17	7.32 մ x 2.44 մ
Մ16	7.32 մ x 2.44 մ
Մ15	7.32 մ x 2.44 մ
Մ14	7.32 մ x 2.44 մ
Մ13	7.32 մ x 2.44 մ
Մ12	5 մ x 2 մ
Մ11	5 մ x 2 մ
Մ10	5 մ x 2 մ

Հոդված 53. Պահեստայինների նստարանները

53.01 Մարզադաշտը պետք է ունենա խաղադաշտի մակարդակի վրա տեղակայված և ծածկի տակ գտնվող երկու նստարան, որոնք նախատեսված են առնվազն 13 անձի համար և տեղակայվում են եզրային գծից առնվազն 4 մետր հեռավորության վրա:

53.02 Միայն Մ18 և Մ17 մանկապատանեկան առաջնությունների համար նախատեսված խաղադաշտերում երկու պահեստային նստարանների միջև ընկած տարածքում տեղադրվում է 4-րդ պաշտոնյայի նստարանը (նախատեսված 2 անձի համար)՝ սեղանով և ծածկով:

Հոդված 54. Փոխարինողների լուսատախտակը

Մարզադաշտը պետք է ունենա փոխարինողների էլեկտրական կամ մեխանիկական 1 լուսատախտակ:

** Համաձայն ՀՖՖ մանկապատանեկան մրցումների անցկացման և ՀՖՖ մանկական մրցումների անցկացման Կանոնակարգերի



Հոդված 55. Պաշտոնյաների և ֆուտբոլիստների համար նախատեսված սենյակները

Հաջորդող հոդվածներում նշված բոլոր այն սենյակները, որոնք գտնվում են ֆուտբոլիստներին և պաշտոնյաներին վերաբերող տարածքներում, պետք է ապահովված լինեն լավ լուսավորությամբ և գտնվեն սանիտարահիգիենիկ բարվոր վիճակում:

Հոդված 56. Հանդերձարանները

56.01 Մարզադաշտերը պետք է ունենան առնվազն մեկական հանդերձարան յուրաքանչյուր թիմի համար, որոնք ապահովված կլինեն նվազագույնը 1 ցնցուղով, 1 զուգարանակոնքով, 1 լվացարանով, առնվազն 20 հոգու նստատեղով, հագուստի կախիչներով կամ պահարաններով:

56.02 Մարզադաշտերը պետք է ունենան նաև մրցավարների համար նախատեսված հանդերձարան, որը պետք է ունենա առնվազն 20մ² տարածք, համալրված լինի 1 ցնցուղով, 1 զուգարանակոնքով, 1 լվացարանով, 3 հոգու համար նախատեսված նստատեղով և 1 գրասեղանով, հագուստի կախիչներով կամ պահարաններով:

56.03 Մարզադաշտում յուրաքանչյուր թիմի և մրցավարական անձնակազմի համար երաշխավորվում է ուղիղ, մեկուսի և ապահով ճանապարհ՝ իրենց հանդերձարաններից դեպի խաղադաշտ և հակառակ ուղղությամբ:

Հոդված 57. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար նախատեսված առաջին բուժօգնության սենյակը

Մարզադաշտը պետք է ունենա ֆուտբոլիստների և պաշտոնյաների առաջին բուժօգնության համար նախատեսված հատուկ սենյակ՝ կահավորված առաջին բուժօգնության համար անհրաժեշտ նվազագույն պարագաներով:

Հոդված 58. Լուսատախտակը

Մարզադաշտում պետք է առկա լինի լուսատախտակ, որն առնվազն հնարավորություն կընձեռի ցուցադրել խաղի հաշիվը: Լուսատախտակը պետք է տեղակայված լինի հնարավորինս կենտրոնական դիրքում:



ՄԱՍ V - ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 59. Անհամապատասխանությունը

Տվյալ կանոնակարգի ցանկացած խախտում կարող է տուգանվել ՀՖՖ-ի կողմից՝ ըստ ՀՖՖ-ի Կարգապահական Կանոնակարգի:

Հոդված 60. Հավելվածները

Բոլոր հավելվածները կազմում են տվյալ կանոնակարգի անբաժանելի մասը:

Հոդված 61. Կիրառությունը

61.01 Սույն Կանոնակարգի պատշաճ կիրառումն ապահովելու համար ՀՖՖ-ի ղեկավարությունն իրավասու է ընդունել ցանկացած ուղեցույց, հրահանգների ձեռնարկ, տեղեկագիրք կամ որևէ այլ նմանատիպ գործիք:

61.02 Ակումբները պետք է պարբերաբար տեղեկացվեն նմանատիպ տեղեկատվական գործիքների առկայության մասին՝ շրջաբերական նամակների միջոցով:

Հոդված 62. Ընդունումը, գործողության ժամկետը և փոխարինումը

62.01 Սույն Կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 01.07.2019 թ-ին:

62.02 Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

62.03 Սույն Կանոնակարգը փոխարինում է Կանոնակարգի 2015 թվականի խմբագրությանը:



ՀԱՎԵԼՎԱԾ Ա - ԼՈՒՍԱՐՁԱԿԻՉՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Ա 1. Տերմինների սահմանումը

Հորիզոնական լուսավորություն

Լուսավորություն, որը տարածվում է հորիզոնական հարթության վրա 1մ բարձրությամբ և խաղադաշտին զուգահեռ:

Ուղղահայաց լուսավորություն

Լուսավորություն, որը տարածվում է ուղղահայաց հարթության վրա 1մ բարձրությամբ և խաղադաշտին ուղղաձիգ:

Միատեսակություն

Լուսավորության միատեսակություն, թե որքան հավասարաչափ է լույսը բաշխված տվյալ հարթության վրա: Լուսավորության միատեսակությունն արտահայտվում է լուսավորության երկու հարաբերակցությունն օգտագործելու միջոցով. U1 և U2:

U1 Լուսավորության ընդհանուր ուժգնություն՝ նվազագույնից մինչև առավելագույն, որին ենթարկվում է մարդը կամ տեսախցիկը:

U2 Տարբերությունը մարդու նորմալ ադապտացված և տվյալ հարթության վրա լուսավորության ամենացածր մակարդակի միջև: U2-ի արժեքը նպաստում է տեսողական հարմարավետությանը:

Լյուքս

Լուսավորության միավորի ցուցանիշը խաղադաշտի մակերևույթին ($1lx = 1lm/m^2$).

E Լույսի քանակությունը, որը տարածվում է մակերևույթի տվյալ կետի վրա (չափված լյուքսով)



Ա.2. Փորձարկումը

Ա.2.1 Փորձարկման սարքավորումներ. Լուսավորության փորձարկման համար օգտագործվող չափման սարքը պետք է հարմարեցված լինի լուսավորված տարածքին: Այն պետք է ունենա լայն անկյունը ընկալող լույսի սենսոր: Չափման սարքը պետք է վերալիցքավորվի յուրաքանչյուր տարի:

Ա.2.2 Փորձարկման գործընթաց. Խաղաղաշտը բաժանվում է 96 կետ ունեցող ցանցի. Լուսավորության փորձարկումն անց է կացվում յուրաքանչյուր կետում, որպեսզի չափվի և՛ հորիզոնական լուսավորությունը (մի անկյան տակ), և՛ ուղղահայաց լուսավորությունը (չորս տարբեր անկյան տակ): Այսպիսով, փորձարկման գործընթացը ընդհանուր առմամբ ներառում է լուսավորության 480 փորձարկում: Լուսավորության չափման սարքը միշտ պետք է տեղադրված լինի ճիշտ անկյան տակ նախատեսված չափումը պատշաճ իրականացնելու համար: Փորձարկումն իրականացնող անձնակազմը չպետք է ստվերներ առաջացնի, որոնք կխոչընդոտեն լուսավորության ճշգրիտ չափմանը: Չափման սարքը պետք է լինի խաղաղաշտից 1մ բարձրության վրա: Ցանցի յուրաքանչյուր կետի համար կատարված լուսավորության չափումը պետք է գրանցվի համապատասխան լուսավորության ցանցի պլանում:

Ա.2.3 Հորիզոնական փորձարկում. Չափման սարքը տեղադրվում է դեպի վերև՝ խաղաղաշտի մակերևույթից 1մ բարձրության վրա: Այն պետք է լինի խաղաղաշտին և ցանցի յուրաքանչյուր կետին զուգահեռ:

Ա.2.4 Ուղղահայաց փորձարկում. Չափման սարքը տեղադրվում է խաղաղաշտին ուղղաձիգ՝ ցանցի յուրաքանչյուր կետից 1մ բարձրության վրա: Չափման սարքը պետք է հետագայում հարմարեցվի փորձարկման չորս դիրքերից յուրաքանչյուրի համար: Փորձարկման դիրքերը նշվում են ուղղահայաց լուսավորության ցանցի պլանում և լինում են 0°, 90°, 180° և 270°. Տվյալ գործընթացը պետք է կրկնվի ցանցի բոլոր 96 կետերի համար:

Ա.2.5 Միատեսակության հարաբերակցությունը հաշվարկվում է հետևյալ կերպ.

ա. U1: E նվազագույն/E առավելագույն

բ. U2: E նվազագույն/E միջին

ՀԱՎԵԼՎԱԾ Բ - ԽԱՂԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



Բարակարճը



Բարակարճային հարող տարածք



Կարողացվածքային տարրեր



ՀՖՖ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Վահան Բերակյան ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ

ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի ստեղծմանը նպաստել են

Արթուր Ազարյան ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար,
ՀՖՖ Գլխավոր քարտուղարի տեղակալ

Ամալյա Գրիգորյան ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավարի տեղակալ

Խորեն Զարգարյան ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռ. +374 11 88 88 08

Էլ. փոս. LICENSING@FFA.AM

WWW.FFA.AM

